



ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ա. Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

Լրացավ հայ մեծանուն գիտնական, բանաստեղծ, աշխարհագրագետ ու պատմարան Ղևոնդ Մարգարի Ալիշանի ծննդյան 150-ամյակը:

Ղ. Ալիշանը ծնվել է Կ. Պոլսում, 1820 թ. հուլիսի 18-ին, հնահավաք Պետրոս-Մարդար Ալիշանյանի ընտանիքում:

Փոքրիկ Քերովբեն (Ղ. Ալիշանի մկրտության անունը) և իր կրտսեր եղբայր Սերովբեն (1822—1903) սկզբնական կրթությունն ստանում են Բերայում գործող Վիեննայի Մխիթարյանների դպրոցում: 1832 թ. այստեղից հայ մանուկների մի փոքրիկ խումբ (10 հոգի) ուղարկվում է Վենետիկ՝ Մխիթարյան միաբանների մոտ կրթությունը շարունակելու: Այդ խմբի մեջ էին նաև Ալիշանյան եղբայրները:

Քերովբեն կյանքում այլևս երբեք չտեսավ իր հարազատներին. ծնողները շուտով մահացան, իսկ եղբոր հետ, որը կարճ ժամանակ անց վերադարձավ Պոլիս և որին նա սիրում էր կաթոգին սիրով, մինչև կյանքի վերջը կապված էր ջերմ նամակներով:

Վենետիկի Ս. Ղազարի վանքում Քերովբե Ալիշանյանը հինգ տարի սովորում է նորընծայաբանում և ապա շորս տարի Բարձրագույն կրթարանում: 1838 թ. 18 տարեկան հասակում Ալիշանը դառնում է Մխիթարյան միաբանության անդամ: Դրա համար նրան նախօրոք վերամկրտում են Ավարայրի ճակատամարտի հերոսներից մեկի՝ Ղևոնդ Երեցի անունով: Երկու տարի անց նա ձեռնադրվում է քահանա, իսկ 1841 թ. պատմության ու բարոյախոսության ուսուցիչ է կարգվում Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում: Նա սկսում է նաև աշխատակցել «Բազմավեպ» հանդեսին, որի էջերում և ձևավորվում է իբրև գրող ու գիտնական:

Վանքում սովորած տարիներին նրա գիտելիքները զուտ գրքային էին. նա ուսումնասիրում էր հին աղբյուրները, գրում պատմա-բանասիրական հետազոտություններ, բանաստեղծություններ, նյութեր էր հավաքում իր ապագա աշխարհագրական հետազոտությունների համար:

Ավելի լայն հորիզոններ բացվեցին Ալիշանի առջև 1850—1851 թթ., երբ միաբանության գործերով այցելեց Լոնդոն, Վիեննա, Բեռլին, ապա՝ Փարիզ, Գենտ, Բրյուսել և այլն: Մի ամբողջ տարի տարբեր բնական պայմանների, զանազան ժողովուրդների հետ շփվելն անշուշտ վառ տպավորություններ առաջացրին և հարուստ նյութ տվեցին հետաքրքրասեր վանականին:

Միաժամանակ, այդ ուղևորությունների ընթացքում Ալիշանը ծանոթանում է եվրոպական անվանի գիտնականների հետ, ուսումնասիրում է հայ ժո-

ղուլրդի մշակույթի բեկորները՝ հին ձեռագրերը, արտագրում ղրանցից առավել արժեքավորները:

Վենետիկ վերադառնալով, Ալիշանը նշանակվում է վանական աշակերտների տեսուչ, ապա նորից է ուղարկվում Փարիզ, այցելում Լիոն, Ջինովա, Միլան, 1858 թ. նրան վիճակվում է Լորրոզ անդամ մեկնել Փարիզ, այս անգամ Մուրադյան վարժարանի ուսումնապետի, ապա նաև տեսչի պաշտոնով:

1861-ին Ալիշանը նորից Վենետիկում է, որտեղ հաստատվում է վերջնականապես, կատարելով թե՛ դիտական և թե՛ մանկավարժական աշխատանք (կրկին Ռաֆայելյան վարժարանում): 1872 թ. նա ընդմիջտ թողնում է մանկավարժական գործունեությունը և ամբողջությամբ նվիրվում գրական-գիտական աշխատանքին:

Ղևոնդ Ալիշանի գրական աշխատանքներում սկզբնական շրջանում գերակշռում էր բանաստեղծությունը: Լինելով Մխիթարյան միաբանության անդամ, նա հավատարիմ մնաց իր նախորդների դրական ավանդներին. խրթին դրաբարով նա փառաբանում էր աստծուն, արձագանքում ղանաղան կրոնական տոներին, իր ավագ և հասակակից ընկերների հոբելյաններին:

Ալիշան-բանաստեղծին հուշակ բերեցին «նվագներ» ընդհանուր խորագիրը կրող հատորները՝ «Մանկունի», «Մաղթունի» և «Բնունի», «Հայրունի», «Տերունի», «Տխրունի», որոնք հաջորդաբար լույս տեսան 1857—1858 թթ.: Առավել մեծ էր «Երդք նահապետի» բանաստեղծաշարի հմայքը:

Ալիշանի դրական ուղղությունը ռոմանտիզմն էր, սակայն սկզբնական շրջանի դրաբար ոտանավորներում առկա էր կլասիցիզմը, որ նա ժառանգել էր իր նախորդներից՝ Արսեն Բաղրատունուց և էդուարդ Հյուրմյուղյանից: Նրանց նման Ալիշանը ևս սկզբում աշխատում էր խրթին լեզվով դրել, վերամշակել ոչ միայն կրոնական-աստվածաշնչային, այլև հունա-հռոմեական պատմության առասպելական շրջաններին վերաբերող թեմաներ: Սակայն նա արդեն այդ ժամանակ դարձ է կատարում դեպի հայկական թեմաները և ստեղծում պատմական-հայրենասիրական մի շարք բանաստեղծություններ, որոնցում կոչ է անում ժողովրդին՝ պատրաստ լինել հայրենիքի թշնամիների դեմ պայքարելու («Սեպուհն Վասակ») կամ նշավակում է հայրենիքի դավաճաններին («Քաջակորով Մուշեղ ի ճակատամարտին Ձիրավա»): Այդ շրջանի գործերում կան նաև հիացմունք առաջացնող քնարական ստեղծագործություններ: Անդուգական են «Հարսերգը», «Հիշատակ մահու և մեռելոցը», «Բնունիի» և «Տխրունիի» շատ բանաստեղծություններ, որոնք հանդիսանում են «մաքուր ու բարձր ներշնչման և ոգեթռիչ ոճի հրաշալիքներ»¹:

Իբրև բանաստեղծ Ղ. Ալիշանը հայտնի էր նահապետ մականվամբ, որով ստորագրված էր 1847-ին լույս տեսած «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը: Հետագայում այդ մականունը ստանում է հասարակ անվան նշանակություն և ողջ հայ մտավորականությունը Ղ. Ալիշանին համարում է հայ գրականության բաղմավաստակ նահապետը:

Ալիշանի երգերում մեծ տեղ է գրավում բնության նկարագրությունը, նրա գովքը, որ հեղինակին խոր մտորումների առիթ է տալիս: Նրա հայացքից չի խուսափում բնության համընդհանուր կերպարանքը իր ամբողջ բարդության մեջ: «Խորհրդածություն ընդ եղևնյավ» գրքույկում նա մտորում է բնության և

¹ Ա. Չ ո պ ա ն յ ա ն, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 98:

մարդու փոխհարաբերության մասին: Բնությունը հավիտենական է, ասում է նա, մարդը՝ անցավոր և մեղքերի մեջ խորասուզված: Հեղինակը համակված է համամարդկային վշախի խոհերով. նա գտնում է, որ մարդուն ազնվացնել (հեռանալու բոլոր գործվելիք շարիքների առաջն առնել) կարելի է բնության պաշտամունքի միջոցով, որին ծառայում են երաժշտությունը, նկարչությունը, բանաստեղծությունը: Մարդը պետք է կարողանա կարգալ բնության գիրքը, որպեսզի նրա օրինակով ինքը ևս կատարելագործվի:

Հարյուրավոր ոտանավորներից բացի, Ալիշանը գրել է նաև աշխարհաբար պոեմներ՝ «Պըլպուլն Ավարայրի» (1847), «Աշոտ Երկաթի ծովուն Սևանա» (1849), «Մուշան Շավարշանա» (1857): Անհուն վշտով վերակենդանացրել է Ավարայրի ահեղ ճակատամարտի իրադարձությունները, հայ հերոսների մահվան, Վարդանի զոհվելու պատկերները: Սակայն, ի վերջո, ասես սթափվելով ողբից ու սգից, նա դուրս է.

Կանչե, պլպուլիկ, կանչե հոգեձայն,
Որ երկնուց ի վայր հայի և Վարդան
Հիշե զՀայաստան տուն յուր սիրեկան,
Հայաստան հիշե գյուր Կարմիր Վարդան:

Դրանով նա ասես հորդորում է հայ ժողովրդին՝ միշտ վառ պահել հայրենասիրությունը, հայրենիքի ազատության ու անկախության սրբազան հուրը, որին ողջակեզ դարձան Վարդանն ու Ավարայրի մյուս հերոսները:

Ինչ վերաբերում է «Մուշան Շավարշանա» պոեմին, ապա նրա թեման թեպետ կրոնական է, բայց գրված է քնարական մեծ շնչով և ներկայացնում է գողտրիկ պատկերների մի պսակ՝ նվիրված հայոց հեթանոս թագավոր Սանատրուկի չքնաղ դուստեր Սանդուխտին, որը հոժարակամ ընդունում է դաժան հոր մահվան վճիռը, բայց չի հրաժարվում իր գաղափարից, կրոնից: Ալիշանին գրավել է նրա արտակարգ արիությունն ու հոգու կորովը. այդպիսի հատկություններով օժտված էր նա ցանկանում տեսնել հայ երիտասարդությունը:

Ալիշանը՝ հայ ժողովրդական բանահյուսության նմուշների առաջին արժեքավորողներից էր: «Բազմավեպի» էջերից նա կոչ էր անում բանասերներին՝ որքան հնարավոր է շատ որոնել և գրի առնել ժողովրդական ստեղծագործություններ, որոնք չնայած երբեմն թիրեց ուսման անուսին համար հասարակ բան մը կկարծվին, բայց ճշմարիտը՝ գերագույն գրվածոց կարգը անցնելու են»²: Ալիշանը 1852 թ. իր հավաքած հայ ժողովրդական երգերը հրատարակում է առանձին գրքով՝ հայերեն ու անգլերեն լեզուներով: Ժողովրդական ստեղծագործության նկատմամբ բուռն հետաքրքրությունը ազդակ է ծառայել Ալիշանի երկերի լեզվում աշխարհաբարի ուժեղ հոսանքին:

Հայոց պատմության բազում առանցքային հարցերը քննության նյութ է դարձրել Ալիշանը: Դեռ երիտասարդական տարիներից նա աշխատել էր «Հայաստան հառաջ քան զլինելն Հայաստան» գրքի վրա. որը հրատարակվեց միայն 1904 թ.: Այն սկսվում է նախապատմական ժամանակներից և ավարտվում Հայկի և նրա հաջորդների պատմությամբ: Չափազանց ուշագրավ աշխատություն է Ալիշանի «Հայ-վենետը» (1896, թարգմանվել է նաև իտալերեն), որը

2 Ղ. Ալիշան, Հայոց երգք ուսման, Ս. Ղազար, 1852, էջ 5:

պարունակում է մանրամասն վերլուծություն այն հարաբերությունների, որ Կիրիկյան հայկական պետությունն ուներ Վենետիկյան հանրապետության հետ: Միաժամանակ պատմվում է այն նշանավոր գործիչների մասին, որոնք հանգես են եկել Վենետիկում հաստատված հայ գաղթականության միջավայրում: «Հին հավատք հայոցում» ամփոփված են այն բոլոր տվյալները, որ կարելի է հանդիպել հայերի հին հեթանոսական կրոնի վերաբերյալ հայ և օտար պատմագիրների աշխատություններում: «Շնորհալի և պարագա յուր» (1871) երկում պատկերված է Հոռմկլայի մեծ երգչի ու բանաստեղծի կյանքը՝ իր ժամանակի իրադարձությունների ֆոնի վրա: «Արշալույս քրիստոնեության ի հայսը» (1901) պարունակում է այն բոլոր դեպքերի նկարագրությունը, որոնցով ուղեկցվել է քրիստոնեության մուտքը Հայաստան:

Դեռևս անտիպ մնացած հատորներից են «Պատմություն հայ վանօրհից յիտալիա և յԵվրոպա», «Մնացորդ տեղագրութեանց Հայաստանի», «Հայկականք», 8 հատոր՝ «Հավաքումն և աղբերք հայ պատմութեան և մատենագրութեան» և այլն³:

Ալիշանը ժամանակ է դրել իր ստեղծագործություններից բացի ուսումնասիրելու և հրատարակելու միջնադարյան հայ հեղինակների մի շարք գործեր, ինչպես, օրինակ, Աբուսահլի «Պատմություն եկեղեցոյց և վանորհից Եգիպտոսի», «Գիրք վաստակոցը», Խոսրով Անձևացու «Մեկնություն պատարագին», Կիրակոսի «Պատմությունը», «Սոփերք հայկականքը»՝ 24 հատորով, որոնք պարունակում են ղանաղան հին հեղինակների մինչ այդ անտիպ գործերը, Վարդան վարդապետի «Հավաքումն պատմությանը» և այլն: Եվրոպացիներին մեր ազգային ավանդությունների հետ ծանոթացնելու նպատակով նա ֆրանսերենով լույս է ընծայել հայոց պատմության հարցերին նվիրված երկու գրքուկ (1861 թ.) և այլն:

«Բազմավեպի» 1849 թ. № 5-ի «Ազգային պակասությանց կամ կատարելությանց վրա» հոդվածում նա զգուշացնում է պատմական անցյալի «բափնինների» վրա հանգստանալուց: «Դրախտին՝ Հայաստանի մեջ ծաղկիլը զմեզ չի կրնար ազատել հիմիկվան փուշեն, որ լեցուն է ճամբնուս վրա... Նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման կըլլանք... Մեր ինչ ըլլալը մեզնե կախված է. անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեր ճամբուն վրա, բայց մենք պետք է որ աշվընիս բանանք ու ոտվնիս շարժենք»:

Սովոր գործեր են Ալիշանի աշխարհագրական, պատմա-հայրենագիտական երկերը: Զգալի տեղ են գրավում ուսուցողական-բնագիտական գործերը: Դրանց գաղափարախոսության համար բնորոշ են հետևյալ տողերը, որ գտնում ենք «Նվեր տղայոց» գրքուկում. «Փառք տանք Աստծո, քանզի մեծ է: Աստված ամեն տեղ է, ամեն բան կտեսնե: Օրհնենք զԱստված, վասն զի ամենակարող է: Աստված ամեն բան է ստեղծեր. արևը՝ օրվան իշխելու համար, լուսինը՝ գիշերվան լույս տալու համար»: Այսպիսով, թվում է, թե գիտության համար այլևս տեղ չկա, քանի որ բոլոր հարցերի պատասխանն ու բացատրությունն արդեն տրված է՝ աստծո կամքը: Սակայն Ալիշանի մոտ ևս, ինչպես ուրիշ բազմաթիվ գրողների գործերում, հանդես է գալիս կրոնական գաղափարախոսությամբ սնված, բայց և գիտական որոնող ուղեղի տեր մտածողին բնորոշ երկվությունը: Հենց նույն գրքուկում հեղինակն իր մանուկ ընթերցողներին

³ Ա. Երեմյան, Կենսագրութիւն Լ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 166—172:

ծանոթացնում է կենդանի բնության, բույսերի հետ, տեղեկություններ է տալիս նրանց կառուցվածքի, աճման պայմանների մասին, պատմում այլևայլ երկրներին, բաղադրանքների, պետությունների, աշխարհամասերի մասին, քննում է, վերլուծում, մտորում: Գիտնականի աշխույժ միտքը, կրոնական շղարշը ճեղքելով, ուղղվում է դեպի բնական երևույթների խորքը, աշխատում թափանցել նրանց էության մեջ, գտնել նրանց ֆիզիկական-կենսաբանական պատճառները, իրեն օղնության կոչելով ժամանակի բնական գիտությունները, ուսումնասիրելով եվրոպական գիտնականների գործերը:

Ալիշանն աշխարհագրությանը վերագրում է ճանաչողական և գիտական մեծ դեր: Դեռևս էլիզե Ռեկլյուսից առաջ նա նշել է պատմության և աշխարհագրության սերտ կապը, որտեղ աշխարհագրությունը հանդես է դալիս ստուգողի և ճշգրտողի դերում:

Աշխարհագրական և պատմա-աշխարհագրական հետազոտություններում նա արևելյան երևակայության ու բանաստեղծության հետ հանդես էր բերում արևմուտքի քննադատական միտք և ճշգրտություն: Նա ստեղծեց այդ բնադավառների՝ իր ժամանակի գիտության մակարդակին կանգնած գործեր, որոնցով հայտնի դարձավ Եվրոպայում:

Ստեղծագործության համաեվրոպական ճանաչման արդյունք հանդիսացավ նաև Ալիշանի հրավիրվելը աշխարհագրագետների միջազգային երրորդ կոնգրեսին, որը տեղի ունեցավ Վենետիկում, 1881 թ. նոյեմբերի 1—22-ը: Կոնգրեսում Ղ. Ալիշանը խոսելիս լեզվով զեկուցում կարգաց «Հայկական աշխարհագրություն» խորագրով: Այդ զեկուցման մեջ նա ցույց է տալիս հայ աշխարհագրական գիտության պատմության հետ իր հիմնավոր ծանոթությունը: Կոնգրեսում Ալիշանի «Շիրակ» աշխատությանը տրվել է առաջին կարգի պատվո վկայագիր:

Ալիշանի աշխարհագրական հետազոտությունները միայն եվրոպական գիտության նվաճումների հետ կապելը սխալ կլինի: Հայտնի է, որ հայ ձեռագիր գրականության մեջ պահպանվել են աշխարհագրական բովանդակությամբ բազմաթիվ բնագրեր, որոնցից շատերը հետագայում հրատարակվել են թե՛ հայերեն և թե՛ այլ լեզուներով: Նոր դարերում ևս աշխարհագրական գիտությունների մեջ հայերը հասան զգալի նվաճումների: Եվրոպական երկրների ձեռնարկած ճանապարհորդությունները և հայտնագործությունները հայերի շրջանում լայն հետաքրքրություն առաջ բերեցին: Հանդես եկավ աշխարհագրական թարգմանական և ինքնուրույն գրականություն, առանձին կեղեցական նվիրակներ կամ վաճառական ուղևորներ այցելեցին եվրոպական երկրները (Մարտիրոս Երզնկացի, XV դ.), Ծթովպիա (Թովմաճան, XVII դ.), Լեհաստան, Հնդկաստան և այլն:

XVIII—XIX դդ. ասպարեզ իշան բազմակողմանի հետաքրքրությունների տեր մի շարք հեղինակներ՝ Խաչատուր Արզրումցին, Հակոբ Նալյանը, Ղուկաս Ինճիճյանը և Ստեփանոս Ազոնցը:

Այդ ականավոր նախորդների արժանի ժառանգը հանդիսացավ Ղ. Ալիշանը, որ հայ աշխարհագրությունը բարձրացրեց նոր աստիճանի և դարձավ հայրենագիտության հիմնադիրն ու առավել ցայտուն ներկայացուցիչը:

Սկսած 1870-ական թվականներից, մեկը մյուսի ետևից, լույս են տեսնում նրա ստվար գործերը՝ «Քաղաքական աշխարհագրություն և կարագույց պատկերոք» (1853), «Նշմարք և նշխարհք Հայաստանի» (1870, թարգմանվել է նաև

ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն): «Շիրակ» (1881), «Սիւվան» (1885, թարգմանվել է նաև ֆրանսերեն), «Այրարատ» (1890), «Սիւսական» (1893), որոնք ընդամիշտ մտել են հայագիտության գանձարանը: Ալիշանի անդրանիկ աշխարհագրական երկասիրությունների մեջ առավել պատկառելիին «Քաղաքական աշխարհագրությունն» է: 800 էջից բաղկացած այս գործը ամփոփում է երկրագնդի բոլոր երկրների աշխարհագրությունը: Դեռևս աշակերտական նստարանից էր աշխատել հեղինակն այդ գրքի վրա, բայց առաջին տարբերակը սոսկ թարգմանությունն էր ֆրանսիացի Շոշարի և Մյունցի «Cours Methodique de Geographie» (1839) աշխատության: Հետագայում Ալիշանը ձեռնամուխ է լինում այդ գործի արմատական վերափոխմանը, օգտագործում է եվրոպական լեզուներով (անգլերեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն) հրատարակված նորագույն աշխատություններ:

Այդ երկի նախատիպը մեր ազգային գրականության մեջ հանդիսացել է Ղուկաս Ինճիճյանի «Դատապարտումը», որտեղ նկարագրված են տարբեր երկրներում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները XVIII դարում:

Ալիշանը, հետևելով իր ժամանակ եվրոպական գիտության մեջ արդեն տարածվող տեսակետներին, դանում է, որ երկրների միջև գոյություն ունեցող ֆիզիկական տարբերություններն անդրադառնում են նրանց բնակիչների բնութագրին՝ բնական կազմվածքին սկսյալ մինչև ի բարոյական բերմունս: Գեղարվեստների բնագավառում հույների և իտալացիների գերազանցության առաջին պատճառը, ըստ Ալիշանի, եղել է իրենց հայրենի երկրի բնությունը՝ բարեխառն կլիման, դալար բուսականությունը, դիրքի տարբերություններն ու ելեկտրերը և մանավանդ՝ ծովը:

Հետագայում, երբ հեղինակը խորանում է հայ ժողովրդի պատմության մեջ, նրա ամբողջ ստեղծագործությունն սկսում է մտնել նոր հունի մեջ և 60-ական թվականներից ստանում գերազանցապես հայագիտական բնույթ: Այստեղից սկսվում է Հայաստանի պատմության և աշխարհագրության հարցերի ուսումնասիրության նրա կրքոտ ու անվերապահ նվիրումի ժամանակաշրջանը: «Քաղաքական աշխարհագրությանը» հաջորդում են հայագիտական «Տեղադրությունները», որոնք ժողովրդին ծանոթացնում էին իր սեփական հայրենիքի հետ:

Ո՞րն է հայի հայրենիքը, հարցնում է Ալիշանը. մի՞թե աշխարհով մեկ ցրված հայության համար հայրենիքը ամեն մեկի ծննդավայրն ու բնակավայրն է: Ո՛չ, պատասխանում է նա, մարդու հայրենիքն այնտեղ է, որտեղ կերտվել է նրա ազգի պատմությունը, որտեղ ստեղծվել են նրա ժողովրդի ձեռագործ ու ձեռագիր հիշատակարանները: «Ազգային հիշատակարանք, ասոնք են բնիկ նշանք հայրենյաց: Ասոնք են յուրաքանչյուր ազգի հայրենյաց ամենն հայտնի և զորավոր արձանագրությունք, միանգամայն ամենն սիրելի և սրտառուչ բաները երկրիս վրա»⁴:

Եվ չնայած Ալիշանը հեռու էր հայրենիքից և նրա տեղագրական աշխատություններն էլ՝ գրաբարյան խրթին ոճերի պատճառով՝ դժվար հասկանալի, այնուամենայնիվ, դրանք սիրված էին ժողովրդի կողմից և դիտվում էին իբրև վաղեմի հողերի վրա նրա անկապտելի իրավունքի փաստաթղթեր, մի բան, որ չէր կարող չզբաղել օտարերկրյա ստրկացնողների զայրույթը: 1886 թ. հունիսի

4. Ղ. Ալիշան, Հուլիկ Գայրենեաց հայոց, Ա. 16:

1-ին՝ Վլ. Ստասովին դրած նամակում Ալիշանը հայտնում է, որ իր հրատարակած «Սիսվան» արդելքի տակ է դրել թուրքական կառավարությունը⁵:

Ալիշանի տեղադրություններից առաջինը «Տեղագիր Հայոց Մեծացն» էր, (1856), որ ընդգրկում է ամբողջ Մեծ Հայքը: Այն միանգամից իր վրա գրավեց գիտական աշխարհի ուշադրությունը: Ֆրանսիացի հայագետ էդվարդ Դյուլոբրենն ֆրանսերեն թարգմանությամբ այն հրատարակեց «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի էջերում, կցելով նրան դրվատական առաջաբան և ընդարձակ ծանոթագրություններ:

Իրանից հետո Ալիշանը ձեռնամուխ է լինում Հայաստանի առանձին մասերի՝ աշխարհների կամ նահանգների ուսումնասիրությանը, ամփոփելով դրանց արդյունքները «Այրարատ», «Սիսվան», «Սիսական» հատորներում: «Շիրակը» առաջին փորձն էր «մանրամասնության»՝ Այրարատյան նահանգի մոտ 30 դավառներից մեկի հանգամանակից նկարագրությունը:

Այդ հատորներում ընթերցողը ծանոթանում է Հին Հայաստանի առանձին նահանգների աշխարհագրական և քաղաքական պատմությանը, տեղեկություններ է ստանում նրանց լեռների, հանքերի, կլիմայի, գետերի, բուսական ու կենդանական աշխարհների մասին, տվյալներ, որոնք մեղվաջան հեղինակը հավաքել է հին և նոր աղագային և օտարազգի գրողների ու ճանապարհորդների զործերից: Այդ գրքերի բազմաթիվ էջերից հառնում են վաղեմի ամրոցները, հայաբնակ քաղաքներն ու քաղաքատեղիները, վանքերը, կանգուն ու կիսակործան եկեղեցիները, ուխտատեղիներ, խաչտրձաններ, բազմաթիվ հայատառ (երբեմն նաև տարալեզու) արձանագրությունների տեքստեր:

Փաստերի, տվյալների վիթխարի առատությունը արդյունք է հեղինակի անհավատալի թվացող աշխատասիրության. նա օրնիբուն հակված էր իր գրասեղանին:

Կարդալով այս կամ այն վայրի, լեռան, ջրերի մասին, զննելով հրապարակված արձանագրությունները, նա կարողանում էր բացահայտել անճշտությունները և աշխատում էր շտկել դրանք: Սկսվում էին համառ հարցապնդումները, տարբեր ուղղություններով ու տարբեր լեզուներով նամակներ էին ուղարկվում: Ալիշանը դիմում էր իր ծանոթներին, բարեկամներին, խնդրում էր տալ իրեն հետաքրքրող հարցի պատասխանը, լուսանկարել այսինչ հուշարձանը, ուղարկել հետաքրքրող գիրքը, ականատեսի նկարագրությունը և այլն: Ծվեթե այդ բոլորից հետո չէր կարողանում ցրել իր տարակուսանքները, տվյալ գրվածքը գատապարտում էր մահվան և չէր հրատարակում: Այդպիսի բախտի արժանացավ, օրինակ, Ծվրոպայի հայ վանքերի պատմությունը, որն արդեն պատրաստ էր, սակայն հեղինակը հրաժարվեց տպագրության հանձնել⁶:

Ալիշանը առաջինն էր հայ աշխարհագրագետներից, որ քննել է Հայաստանի աշխարհագրական դիրքից և տեղանքի բարձրությունից բխող առանձնահատկությունները: Գտնվելով մերձարևադարձային երկրների՝ Պիրենեյան, Ապենինյան ու Բալկանյան և Փոքր Ասիական թերակղզիների լայնության վրա, Հայաստանը ունի բնության արտակարգ հակադրություններ, կամ ինչպես հեղինակն անվանում է «ընդդիմականեր»: Ալիշանը դիպուկ կերպով նկատում է,

5 Ա. Ա. դ. ա. մ. յ. ա. ն., Ղ. Ալիշանի անտիպ նամակներից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 3, էջ 118:

6 Ա. Ծ. ր. Ե. մ. յ. ա. ն., Կենսագրություն 2. Ալիշանի, էջ 159:

թե երկրաբանական տեսակետից Հայաստանը մեկն է նորագույն գոյացություններից, իսկ պատմական առումով՝ «երկրիս ամենեն հին» մասերից: Երկրաբանական կառուցվածքի մեջ նա լիովին հասկացել ու գնահատել է հրաբխային գոյացությունների գերը: Խոսելով տարբեր հանքերի մասին, որոնց վերաբերյալ տեղեկություններ են հանդիպում պատմական անցյալում, Ալիշանը շեշտում է, թե երկրի «հասարակ քարերի» ռազմակերպ տեսակներն իր հրաբխից բերքերն են» և դրանց պաշարները հայոց լեռներում անսպառ են:

Առաջինն Ալիշանն է եղել, որ մեզանում ամենայն սրությամբ հարց է բարձրացրել հնությունները պահպանելու, պատմական հուշարձանները անհետացումից փրկելու մասին: Այդ կիսովեր նշխարները նա անվանում է «անձայն քարոզք հանճարոյ, հավատոյ, ճարտարութեան և մեծագործութեան հարց մերոց», որոնք, իբրև հայրենատուր անդրժելի ժառանգություն, պետք է պահպանել և փոխանցել հետագա սերունդներին, նկարագրել ավերակները, շափագրել, լուսանկարել, հնարավոր եղածները վերականգնել իրենց վաղեմի տեսքով:

Ալիշանի աշխատություններում հաճախակի են հանդիպում նաև բնության պահպանության, անտառները կորստից փրկելու վերաբերյալ խորհրդածություններ: Հեռվից հեռու նա դիտեր, թե ինչ աղետալի վիճակում է գտնվում բնության պահպանության գործը Հայաստանում: «Այրարատ» աշխատության մեջ նա հարց է դնում ավերվածը, հատկապես անտառները վերականգնելու մասին: Նա ասում է «Այլ յանդիտութեն անտառաղարմանութեան նվազելով նվազեր շուք լերանցն, որք թերևս յայսմ հետե լավագոյն դոցնն բաղդ է ի դարել պատերազմաց՝ գաղարեսցին և վայրապար կոտորածք ծառոց»⁷:

«Հայբուսակ» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1895 թ., Ալիշանը տալիս է Հայկական լեռնաշխարհի բույսերի անունները՝ թվով 3400, հայերեն, լատիներեն, արաբերեն, ֆրանսերեն, երբեմն էլ ռուսերեն: Սակայն մեծ մասամբ նա անցնում է զուտ բառարանային սահմաններից և բերում է հանրագիտական բազմաթիվ տվյալներ՝ յուրաքանչյուր բույսի հատկանիշների, ենթատեսակների օգտակարության և աշխարհագրական տարածվածության մասին:

Բույսերի մասին տեղեկություններ ստանալու համար Ալիշանը չի բավականացել գրական աղբյուրներով: Նա կապ է պահպանել հայ գավառների հետ և նամակներով ստացել շատ բույսերի անուններ: 1890 թ. իր հոբելյանի առթիվ Ալիշանը նվեր է ստանում փոքրիկ հերբարիում՝ 50-ից ավելի շորացրած և կաշեկազմ գրքի ձևով դասավորված բույսեր, որ հավաքել էին տրապիդոնցի հայ ուսուցիչները և բանասեր երիտասարդները քաղաքի շրջակա գյուղերից ու լեռներից:

Ղևոնդ Ալիշանի անմահ ստեղծագործությունը մեր գրականության համար հեղափոխող դեր խաղաց, զարկ տալով աշխարհիկ պատմա-հայրենասիրական, էպիկա-քնարական պոեզիայի զարգացմանը՝ հայ ժողովրդի զորթոնքի և աղգային-ազատագրական պայքարի պրոցեսներին համաքայլ:

Նրա ազատաբաղձ տենչերով, նրա լուսեղեն երազի անմար տեսիլքներով ոգևորվեցին գրական հետագա սերունդները: Նրանից ազդվեցին և նրա ստեղծագործական-գեղարվեստական դավանանքի ժառանգորդները հանդիսացան իր համարյա բոլոր ժամանակակիցները, որոնք շատ բարձր են գնահատել բա-

7 Ղ. Ա. Ա. Ասլանյան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 71:

նաստեղծի վաստակը: Միք. Նալբանդյանը նշել է, որ «շափաբերական քերթ-վածոց մեջ արժանապատիվ վարդապետը ախոյան շունի»⁸: Ղ. Աղայանն իր հիացմունքն արտահայտել է հետևյալ խոսքերով՝ «Հայր Ղևոնդ Ալիշանը գարուս հայկական հանճարի ներկայացուցիչն է: Իբրև բանաստեղծ՝ բոլոր բանաստեղծների նահապետը»⁹: Ավ. Իսահակյանը տվել է Ալիշանի ամբողջ վաստակի համապարփակ դնահատականը, այն մարդու, որն «առանց նյութական աչքերով տեսնելու հոգով տեսավ դարերի մեջ թաղված Հայաստանը... այցելեց նրա ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորով, շնչավորեց ավերակները, գզվեց, հիացավ նրանցով... Հայաստանը ոչ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ոչ ոք այնպես չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը իրականություն»¹⁰:

Նույնքան, եթե ոչ ավելի պերճախոս են Ալիշան-գիտնականին տրված գնահատականները: Հայ մտավորականությունը ի դեմս Ալիշանի տեսավ ազգային մշակույթի գանձերի կրթոտ պահպանողին և խոշորագույն պրոպագանդիստին: Ընդհանուր հիացմունքի առարկա դարձավ գիտնականի վիթխարի աշխատասիրությունը, որի արդյունքը եղան երկերի մոտ 70-ի հասնող հատորները: Բանասերներից մեկի արտահայտություններ, Ալիշանը միայնակ կատարել է քսան մարդու գործ և ստեղծել է մի պատկառելի գրադարան: Գիտական հարցերի մշակումը Ալիշանը կատարել է մեծագույն բարեխղճությամբ և ոսկերչական մանրակրկիտությամբ, ուստի և մինչև այժմ էլ մնում է իբրև հայագիտության բարձրագույն հեղինակություններից մեկը:

Մեծ համարում ուներ Ալիշանը նաև ուսուստարագրի գիտական շրջաններում: Նրա ջերմ բարեկամներից էին Վինդիշմանը, Զախաուն, Պետերմանը, Ռենոն, Դյուլորիեն, Հյուրշմանը, Բաումգարտենը, Բրոսեն, Վեսելովսկին, Ստասովը, Բրյուսովը, Լայստը, որոնք նրան շատ բարձր են գնահատել իբրև գիտնականի և գրողի, թարգմանել են նրա շատ գործեր: 1886 թ. Ալիշանն արժանանում է ֆրանսիական ակադեմիայի Պատվո կեդիոնի շքանշանին, հետագայում ընտրվում է Իտալիայի Ասիական ընկերության, Մոսկվայի և Պետերբուրգի հնագիտական ընկերությունների, Ծնայի փիլիսոփայական ակադեմիայի անդամ և այլն:

Սակայն կյանքում միշտ չափավոր և զուսպ Ալիշանն իր գործերը դիտում էր լուկ իբրև հայրենիքի նկատմամբ ունեցած սուրբ պարտքի կատարում և դրա դիմաց ոչ մի հատուցում չէր ակնկալում: Ժամանակակիցների վկայությամբ նա դժկամությամբ էր վերաբերվում իր շրջապատի և այցելուների կողմից արտահայտվող հարգանքի ցույցերին, խուլ էր ամեն տեսակ մեծարանքի հանդեպ և նույնիսկ չէր ցանկանում, որ իրեն լուսանկարեն: Նահապետի նկարների մեծ մասը հանվել է առանց իր գիտության:

Անձնական կյանքում նա սակավապետ է եղել և գոհ այն բանից, որ կարող է աշխատել, անընդհատ աշխատել: Երբ այցելուներից մեկը, որ ցանկանում էր դրել արդեն լալեզարդ Ալիշանի կենսագրությունը, հարցնում է, թե ինչ տիտղոսներ և ինչ շքանշաններ ունի, ժերունին պատասխանում է՝ «Տիտղոսներս՝ հայ և քահանա, շքանշաններս՝ կապաս և գոտիս»:

8 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժող., հ. III, էջ 120:

9 «Տարազ», № 14:

10 Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 4, Երևան, 1959, էջ 12—13:

Ալիշանին տեսնողները զղացել են նրա անձնական հմայքը, հիացել նրա գիտելիքներով, անսահման աշխատասիրությամբ, որոնց ղարղարել է անբռնաղբոս համեստությունը: Ա. Չոպանյանը գրել է. «Տպավորությունը զոր իր անձը վրաս թողուց... շվարումի, խանդաղատանքի և ղմայլման բուռն խառնուրդ մը հղալ: Պարթև հասակով, թիկնեղ և վեհաշուք ծերունի մը կսպասեի դտնել, և տեսա փոքրիկ, թեթև, գրեթե աննյութ էակ մը, որ գետնին վրայն կսահեր, ալելի քան կքալեր, և որ իր թռչնակին վլին վրա կը կրեր երկրպագելի գլուխ մը ալևոր մանուկի: Մերացած հրեշտակ մը կարծես, որ երկինքն փախեր մեր մեջն էր հկեր, իր բյուրեղե երդովը պահ մը մեր ցավերն անուշցնելու համար»¹¹...

Նրա նվիրական երազանքն էր՝ աղասու ու ծաղկուն տեսնել Հայաստանը, գերազույն մխիթարությունն էր՝ զղալ, որ ինչ որ չափով նպաստել է դրա իրականացմանը:

1901 թ. նոյեմբերի 9(22)-ին Ալիշանը կարճատև հիվանդությունից հետո վախճանվեց և թաղվեց Ս. Ղալար կղզում:

ГЕВОНД АЛИШАН

А .А. АСЛАНЯН

Р е з ю м е

Исполнилось 150 лет со дня рождения известного армянского поэта, ученого-географа и историка Гевонда Алишана.

Алишан был одним из образованнейших людей своего времени. Преодолев классицизм и религиозно-мистические мотивы своих предшественников, он создал шедевры армянской лирической и патриотической поэзии. Особую ценность представляют «Песни Наапета», написанные на живом народном языке. Алишану принадлежит благородный почин собирания и изучения народных песен.

Велики заслуги Алишана в области истории и географии. В течение всей своей долгой жизни он с увлечением отдавался изучению истории армянского народа; тщательно изучив географию своей страны, он написал ряд работ, посвященных различным вопросам в этой области, которые представляют собой большой научный интерес и в наши дни.

¹¹ Ա. Չոպանյան, Դեմքեր, էջ 101: